



Արսեն Սպարտակի Մելքոնյանը ծնվել է 1976 թվականի հոկտեմբերի 13-ին Երևան քաղաքում:

1998 թվականին ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի Միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետը՝ տնտեսագետ մասնագիտությամբ:

Մասնակցել է EBRD, IFC, KFW, CGF, USAID և մի շարք այլ կազմակերպությունների կողմից կազմակերպված որակավորման բարձրացմանն ուղղված դասընթացների՝ բիզնեսի պլանավորման, կառավարման, վաճառքների խթանման, ռիսկերի կառավարման, հաճախորդների լոյալության բարձրացման և այլ թեմաներով, արտերկրում և Հայաստանում:

Մասնակցել է նախագծերի կառավարման APM որակավորման դասընթացների:

2014-ից 2017 թվականներին, որպես հրավիրված դասախոս, Երևանի պետական համալսարանի Մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում դասավանդել է բանկային գործ առարկան ակտուար մաթեմատիկայում մասնագիտացող ուսանողների համար:

Իր մասնագիտական գործունեությունը Արսեն Մելքոնյանը սկսել է 2000 թվականի մայիս ամսին ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ կոոպերատիվում (ներկայիս «Ակբա բանկ» ԲԲԸ) որպես վարկային գործակալ:

2004 թվականի հունվար-օգոստոս ամիսներին ՀԱՅԳՅՈՒՂՓՈՒՄԲԱՆԿ կոոպերատիվում ղեկավարել է Առևտրային վարկերի բաժինը:

2004 թվականի սեպտեմբերից մինչև 2008 թվականի օգոստոս ամիսն Արսեն Մելքոնյանը ղեկավարել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Շենգավիթ»

մասնաճյուղը, 2008 թվականի օգոստոս ամսից մինչև նույն տարվա դեկտեմբեր ամիսը՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Դավթաշեն» մասնաճյուղը: 2009 թվականի հունվար ամսին կրկին նշանակվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ «Շենգավիթ» մասնաճյուղի կառավարիչ:

2010 թվականի օգոստոս ամսին Արսեն Մելքոնյանը նշանակվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ի Առևտրային վարկերի բաժնի պետ:

2011 թվականի հունվար ամսին, Առևտրային վարկերի բաժինը 5 ամիս ղեկավարելուց հետո, նշանակվել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Վարկային տնօրենի տեղակալ:

2014 թվականի հունվարից ղեկավարել է «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Բիզնես ուղղությունների զարգացման վարչությունը, իսկ 2017 թվականի հունիս ամսից՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ» ՓԲԸ Չարգացման և մարքեթինգի վարչությունը:

2018 թվականի ապրիլի 10-ին նշանակվել է ««Ակբա բանկ» ԲԲԸ Բիզնես գործառնությունների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ:

Ամուսնացած է, ունի դուստր և որդի: